ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Փետրվարի 16-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր նորանշանակ հավատարմատար պրն Մամուն Հարիրիին:

Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները փոխանցեց պրն Հարիրիին՝ բարի և արդյունավոր առաքելություն ցանկանալով Հայաստանում: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ երկու ժողովուրդների միջև առկա դարավոր բարեկամությունը նույն ջերմությամբ շարունակվում է և տարեցտարի զորանում համագործակցությունը երկու երկրների միջև:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն, ի դեմս Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարի, շնորհակալություն հայտնեց այն հոգատար վերաբերմունքի համար, որ Սիրիայի իշխանությունները մշտապես դրսևորում են հայ ժողովրդի զավակների նկատմամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը վերհիշեց նաև 2001 թվականին կատարած այցը Հալեպ և Դեր Զոր, ինչպես նաև Սիրիայի Արաբական Հանրապետության գլխավոր մուֆթի Շեյխ Ահմադ Բադր Ալ-Դին Հասսունի գլխավորած պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2006 թվականին:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Փետրվարի 27-ին պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լեհաստանի արտաքին գործերի նախարար տիկին Աննա Ֆոտիգան ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Բայբուրդյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր հանդիպում ունեցավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի հետ:

Գերաշնորհ Սրբազան Հայրը տիկին Ֆոտիգային փոխանցեց Հովվապետական այցով Հնդկաստանում գտնվող Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույններն ու բարեմաղթանքները: Արշակ Սրբազանը մասնավորաբար գոհունակություն հայտնեց Լեհաստանում հայ համայնքի հանդեպ մշտապես ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների, ինչպես նաև երկու երկրների միջև զարգացող գործակցության մասին: Մասնավոր անդրադարձ կատարվեց երկու երկրների կրոնական իրավիճակին և Հայաստանյայց Առաքելական ու Հռոմեականաթոլիկ Եկեղեցիների կարևոր դերակատարությանը հայ և լեհ ժողովուրդների կյանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ